17.08.2021
347-95

ՀՀ տարածքային կառավարման եւ
ենթակառուցվածքների նախարար
Պրն Գնել Սանոսյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սանոսյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել «Առավոտ» օրաթերթի լրագրող Հռիփսիմե Ջեբեջյանը՝ նշելով, որ 2021 թվականի օգոստոսի 2-ին դիմել է Ձեզ տեղեկություն ստանալու հարցմամբ (հարցումը կցվում է) և 2021 թվականի օգոստոսի 10-ին ստացել է պաշտոնական պատասխան, որով նախարարությունը տեղեկացրել է, որ լրագրողի հարցման պատասխանը կտրամադրվի 30-օրյա ժամկետում (պատասխանը կցվում է)։ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը գտնում է, որ սույն գրությամբ պետական մարմինը չարաշահել է տեղեկություն տրամադրելու 30-օրյա լրացուցիչ ժամկետ կիրառելու լիազորությունը։

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ հայցվող տեղեկությունները օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում.

1. Արամի 23 հասցեի շենքի վերականգնման աշխատանքների հետ կապված ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը «Առավոտի» գրավոր հարցմանն ի պատասխան նշել է, որ հաշվի առնելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգերը՝ նախարարությունը համապատասխան ֆինանսական օժանդակություն ստանալու համար դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ ժամանակավոր ամրակայման միջոցառումներ իրականացնելու համար, սակայն դեռևս պատասխան չի ստացվել: Ի՞նչ դիրքորոշում ունի այսօր նախարարությունը եւ այդ հուշարձան-շենքի գոնե ժամանակավոր ամրակայման աշխատանքների համար պատրաստվո՞ւմ է միջոցներ տրամադրել:

2. Արամի 23 հասցեի շենքի ժամանակավոր ամրակայման աշխատանքների համար որքա՞ն գումար է նախատեսվում:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am